



ՆՊԱՏԱԿԸ, ՈՐԸ ԿՓՈՒՄԻ ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Թեև, սպասավորության շատ նպատակներ կան, մեր ջանքերը պետք է առաջնորդվեն ուրիշներին օգնելու ցանկությամբ, որ նրանք ավելի խորը անձնական դարձ ունենան և ավելի նմանվեն Փրկիչին:

Երբ սիրում ենք մարդկանց այնպես, ինչպես Փրկիչը սիրեց, մենք ցանկանում ենք օգնել նրանց այնպես, ինչպես Նա օգնեց: Բարի Հովվի նման նա իմաստալից ծառայության ամենամեծ օրինակն է:

Մեր սպասավորությունը կատարելով Նրա նման, կարևոր է հիշել, որ սիրելու, բարձրացնելու, ծառայելու և օրհնելու Նրա ջանքերն ավելի բարձր նպատակ էր հետապնդում, քան անմիջական կարիքը բավարարելը: Անշուշտ, նա գիտեր նրանց ամենօրյա կարիքները և կարեկցանք էր զգում նրանց ունեցած տառապանքների վրա: Այսպիսով, Նա բժշկեց, կերակրեց, ներեց և ուսուցանեց: Մակայն, Նա ուզում էր ավելին անել,

քան պարզապես բավարարել այսօրվա ծարավը (տես Հովհաննես 4.13–14): Նա ուզում էր, որ Իրեն շրջապատող մարդիկ հետևեն Իրեն (տես Ղուկաս 18.22, Հովհաննես 21.22), ճանաչեն Իրեն (տես Հովհաննես 10.14, Վարդապետություն և Ուխտեր 132.22–24), և հասնեն իրենց աստվածային ներուժին (տես Մատթեոս 5.48): Այդ նույնը ճշմարիտ է այսօր (տես Վարդապետություն և Ուխտեր 67.13):

Կան բազմաթիվ եղանակներ, որոնցով կարող ենք օրհնել ուրիշներին, բայց երբ մեր սպասավորության վերջնական նպատակն է օգնելու ուրիշներին ճանաչել Փրկիչին և ավելի նմանվել նրան, մենք կհասնենք այն օրվան, երբ մենք

չենք սովորեցնի մեր հարևանին ճանաչել Տիրոջը, որովհետև բոլորս էլ կճանաչենք նրան (տես Երեմիա 31.34):

Փրկիչը ուշադրությունը դարձրեց անմիջական կարիքներից այն կողմ

- Մի քանի հոգի երկար ճանապարհ կտրեցին, որպեսզի իրենց անդամալույծ ընկերոջը բերեին Հիսուսի մոտ բուժվելու: Վերջում Փրկիչը բուժեց այդ մարդուն, բայց Նա ավելի շատ հետաքրքրված էր նրա մեղքերը ներելու մեջ (տես Ղուկաս 5.18–26):
- Երբ մարդիկ Փրկիչի մոտ բերեցին այն կնոջը, ով բռնվել էր շնանալիս, Նա թղտապարտեց այդ կնոջը, որով փրկեց նրա ֆիզիկական կյանքը: Բայց, Նա ուզում էր նաև հոգևորապես փրկել նրան, ասելով՝ «Գնա և այսուհետև մեղք մի գործիր» (տես Հովհաննես 8.2–11):
- Մարիամը և Մարթան Հիսուսին լուր ուղարկեցին և խնդրեցին Նրան գալ և բժշկել Իր ընկերոջը՝ Ղազարոսին: Հիսուսը, ով շատ անգամներ բուժեց ուրիշներին, հետաձգեց Իր ժամանումն այնքան, մինչև Ղազարոսը մահացավ: Հիսուսը գիտեր, թե ընտանիքն ինչ է ցանկանում, բայց բարձրացնելով Ղազարոսին մահացածների միջից, Նա ամրապնդեց Նրա աստվածության մասին նրանց վկայությունները (տես Հովհաննես 11.21–27):

Ի՞նչ այլ օրինակներ կարող եք ավելացնել այս ցուցակին:

Ի՞նչ կարող ենք մենք անել:

Եթե մեր նպատակն օգնելն է, որպեսզի ուրիշներն ավելի նմանվեն Փրկիչին, ապա մեր սպասավորության ձևը կփոխվի: Միայն մի քանի տարբերակներ, թե ինչպես կարող է այդ հասկացողությունն առաջնորդել սպասավորելու մեր ջանքերը:

Պատմություն 1. Ծառայությունը կապեք Փրկիչի հետ

Բարիք գործելու մեր բոլոր ջանքերն արժան են, բայց կարող ենք փնտրել հնարավորություններ, որպեսզի ավելի ընդլայնենք մեր ծառայությունը՝ կապելով այն Փրկիչի հետ: Օրինակ, եթե ձեր սպասավորող ընտանիքի անդամը հիվանդ է, կերակուրը կարող է օգտակար լինել, բայց ձեր սիրո պարզ արտահայտումը կարող է բազմապատկվել Փրկիչի սիրո մասին ձեր վկայությամբ: Բակում կատարած ձեր օգնությունը կգնահատվի, բայց քահանայության օրհնությունը կարող էր ավելի իմաստավոր լինել:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենը ուսուցանել է. «Լավ հոգատար մարդը կարող է օգնել մեկին ամրացնել անվաղողը, սենյակակցին տանել բժշկի, ճաշել որևէ մեկի հետ, ով տխուր է, կամ օրն ավելի պայծառ դարձնելու համար՝ ժպտալ և բարևել:

«Բայց առաջին պատվիրանի հետևորդը, բնականաբար, կավելացնի ծառայության այդ կարևոր գործերին»:¹

Պատմություն 2 . Կենտրոնացեք ուխտի ճանապարհի վրա

Եկեղեցու անդամների հետ առաջին անգամ խոսելիս Եկեղեցու նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ասել է. «Մնացեք ուխտի ճանապարհի վրա»: Ուխտեր կապելով և պահելով այդ ուխտերը, «դուռ կբացի հոգևոր բոլոր օրհնությունների և արտոնությունների առաջ»:²

Որպես Վերջին Օրերի Սրբեր մենք մկրտվել, հաստատվել և ստացել ենք Սուրբ Հոգու պարգևը: Եկեղեցու արժանի տղամարդիկ ստանում են քահանայությունը: Մենք գնում են տաճար՝ մեր օժտման և ընտանիքներով հավերժ միասին կնքվելու համար: Այս փրկող արարողությունները և նրանց հետ կապված ուխտերը կարևոր են Նրա նման դառնալու համար, որպեսզի կարողանանք բնակվել Նրա հետ:

Մենք կարող ենք կարևոր դեր խաղալ և օգնել ուրիշներին քայլելու այս ճանապարհով, երբ մենք օգնենք նրանց պահել իրենց ուխտերը և պատրաստվել հետագա ուխտեր կապելուն:³ Ինչպե՞ս կարող եք օգնել անհատներին կամ ընտանիքներին, որոնց ծառայում եք, որ նրանք ստանան իրենց անհրաժեշտ հաջորդ արարողությունը: Դա կարող եք անել՝ օգնելով հորը պատրաստվել մկրտելու դստերը, բացատրելով հաջորդ ուխտի օրհնությունները, կամ կիսվելով միջոցներով, թե ինչպես կարող ենք հաղորդությունը ճաշակելիս մեր ուխտերը նորոգելու ժամանակ ավելի իմաստավոր փորձառություն ունենալ:

Պատմություն 3 . Հրավիրեք և խրախուսեք

Երբ հարմար է, խորհրդակցեք իրենց դարձի և Քրիստոսին ավելի նմանվելու իրենց ջանքերի մասին՝ այն մարդկանց հետ, ում մասին հոգ եք տանում: Նրանց ասացեք, թե ինչ ուժեղ կողմեր եք տեսնում և ինչն եք հավանում նրանց մեջ: Պարզեք, թե իրենց կարծիքով ինչը կարող են բարելավել և զրուցեք, թե ինչպես կարող եք օգնել: (Խորհրդակցելու մասին նրանց, ում դուք ծառայում եք, լրացուցիչ տեղեկությունների համար, տես «Խորհրդակցեք

նրանց կարիքների վերաբերյալ», *Լիստինա*, սեպտ. 2018, 6–9:)

Մի վախճանգեք հրավիրելու նրանց հետևել Փրկիչին և թույլ տալ, որ Նա օգնի հասնելու իրենց աստվածային ներուժին: Այդ հրավերը կարող է փոխել կյանքեր, եթե զուգակցվի նրանց հանդեպ ձեր վստահության և Փրկիչի հանդեպ ձեր հավատքի արտահայտման հետ:

Վեց եղանակ, որոնք կօգնեն ուրիշներին առաջադիմել դեպի Քրիստոսը

Հետևյալ առաջարկները կարող են օգնել ուրիշներին բարելավվել իրենց կյանքը և առաջադիմել ուխտի ճանապարհին: (Տես *Քարոզիչ Իմ Ավետարանը*, գլուխ 11, ավելի շատ գաղափարների համար:)

- 1. Կիսվեք:** Եղեք բնական և համարձակ, երբ կիսվում եք, թե ինչպես է Փրկիչն օգնել ձեզ, երբ անկախ խոչընդոտներից ապրելով ավետարանի սկզբունքներով փորձել եք մոտենալ Նրան:
- 2. Խոստացեք օրհնություններ:** Մարդկանց փոփոխելու ավելի ազդեցիկ պատճառ է պետք, քան՝ չփոխվելու: Բացատրելով գործողությունների հետ կապված օրհնությունները, կարող են գորեղ շարժառիթ լինել (տես Վարդապետություն և Ուխտեր 130.20–21):
- 3. Հրավիրեք:** Ավետարանի սկզբունքով ապրելը վկայում է դրա ճշմարտացիության մասին (տես Հովհաննես 7.17) և առաջացնում է ավելի խորը դարձ: ⁴ Գրեթե յուրաքանչյուր շփում կարող է ընդգրկել այնպիսի մի հրավեր, որը կօգնի նրանց առաջընթացին:
- 4. Ծրագրեք միասին:** Ի՞նչ պետք է տեղի ունենա նրանց հետ, որ կարողանան պահել փոխվելու իրենց պարտավորվածությունը: Ինչպե՞ս

դուք կարող եք օգնել: Արդյո՞ք դա ժամանակ է պահանջում:

- 5. Աջակցեք:** Երբ օգտակար է, ստեղծեք աջակից մարդկանց մի խումբ, որը կարող է օգնել անհատին ոգևորված մնալ և հաջողության հասնել: Մենք բոլորս էլ ոգևորող մարդու կարիք ունենք:
- 6. Հետևողական եղեք:** Կանոնավորապես կիսվեք առաջընթացով: Ընթացքը ըստ ծրագրի, բայց անհրաժեշտության դեպքում մշակեք այն: Եղեք համբերատար, համառ և քաջալերող: Փոխվելու համար ժամանակ է հարկավոր:

Գործելու հրավեր հղեք

Մտածեք, թե սպասավորելու ձեր մեծ և փոքր ջանքերն ինչպես կարող են օգնել ուրիշներին խորացնել իրենց դարձը և ավելի նմանվել Փրկիչին:

«Սպասավորության սկզբունքները» հողվածները նախատեսված են օգնել մեզ, որպեսզի հոգ տանենք միմյանց մասին, ոչ թե կիսվենք դրանցով որպես ուղերձ: Երբ մենք ծանոթանում ենք նրանց հետ, ում ծառայում ենք, Սուրբ Հոգին կհուշի մեզ, որ իմանանք, թե նրանք ինչ ուղերձի կարիք ունեն՝ ի լրումն մեր հոգատարության և կարեկցանքի:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Neil L. Andersen, “A Holier Approach to Ministering” (Brigham Young University devotional, Apr. 10, 2018), 3, speeches.byu.edu.
2. Ռասսել Մ. Նելսոն, «Միասին առաջ ընթանալով», *Լիստինա*, ապրիլ 2018, 7:
3. Տես Հենրի Բ. Այրինգ, «Խոստեր ուխտի մեջ», *Լիստինա*, մայիս 2014, 125–28:
4. Տես Դեյվիդ Ա. Բեդնար, «Դարձ դեպի Տերը», *Լիստինա*, նոյ. 2012, 106–109: